# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

❋ 5 Սեպ. Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան անցաւ Նոր Երուսաղէմ, ուր պիտի պաշտօնավարէ իբրեւ հոգեւոր հովիւ տեղւոյն փոքրաթիւ հայութեան։

❋ 2 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն Բ. Գողգոթայի մեր մատրան մէջ. պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։

❋ 7 Հոկտ. Ուրբ. — Ըստ իրաւական կարգի այս երեկոյեան ժամերգութիւնը եւ վաղուան տօնին նախատօնակը կատարուեցաւ քաղաքի Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյն մէջ, հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի։

❋ 8 Հոկտ. Շբ. — Ս. Գէորգայ զօրավարին. առաւօտուն՝ գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, հոգեշնորհ վարդապետ հայրեր, թափօրական գնացքով — ինչպէս երէկ — մեկնեցան Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցին ուր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Տօնիկեան։ Քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան, բնաբան ունենալով Ս. Գէորգի կեանքն ու նահատակութիւնը։

— Ց. միջօրէի, ժամը 1ին, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, առաջ թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան, մեկնեցաւ դէպի Բեթանիա գիւղը, դիմաւորելու համար Ն. Վեհ. Ապտալլահ Թագաւորի Պաղեստին այցելութիւնը։

— Երեկոյեան հոգեշնորհ վարդապետ հայրեր գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի թափօրական գնացքով իջան Ս. Յարութեան Տաճար։ «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն եւ Քրիստոսի Ս. Գերեզմանին ուխտէն ետք, թափօրը բարձրացաւ մեր վերնատան մատուռը, ուր կատարուեցաւ երեկոյեան պաշտամունքը եւ վաղուան տօնին նախատօնակը։ Այս տեղի ունեցաւ երեկոյեան թափօր Տնօրինական Սրբավայրերուն մէջ։

❋ 9 Հոկտ. Կիր. — Տօն Վարագայ Ս. Խաչին. առաւօտուն՝ գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, վարդապետ հայրեր թափօրական գնացքով մեկնեցան դէպի Ս. Յարութեան Տաճար։ Վերնատան Բ. Գողգոթայի մատրան մէջ առաւօտեան ժամերգութիւնը կատարուելէ յետոյ՝ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ Պատարագեց եւ քարոզեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան, բնաբան ունենալով «Այլ ինձ քաւ լիցի պարծել բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

❋ 10 Հոկտ. Բշ. — Ց. միջօրէի, ժամը 1.30ին, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան Բեթանիա գիւղին մէջ դիմաւորեց Ն. Վեհ. Ապտալլահ Թագաւորի մուտքը Երուսաղէմ։

❋ 12 Հոկտ. Դշ. — Այսօր վերաբացուեցաւ Ս. Թարգմանչաց Նախակրթարանն ու Մանկապարտէզը։ Վարժարանին շէնքը որ ցարդ կը ծառայէր իբրեւ կեդրոն Անդր-Յորդանանեան զօրաց հին քաղաքի մէկ զօրաբաժնին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր դիմումին վրայ պարպուած է զօրքերէ ու փոխանցուած վանական վարչութեան։ Շէնքը վնասուած ըլլալով վերջին պատերազմեան հրեայ-արաբ կռիւներէն՝ ենթարկուեցաւ մեծածախս նորոգութեան։

Տարեմուտին՝ արձանագրուած երկսեռ աշակերտութեան ընդհանուր թիւն էր, Նախակրթարանը՝ 237 եւ Մանկապարտէզը՝ 231։

❋ 16 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։

---

մձա, մաա, կնիկ՝ գմնագ, Մրշ. գընագ եւն. — ր բաղաձայնը Զէյթունում եւ Հաճինում դառնում է յ, իսկ ռ՝ Հաճինում դառնում է ր։

Ձայնաւորների մէջ նկատում ենք նմանեցման ձգտումը. բառի մէջ գտնուած բոլոր ձայնաւորներն էլ ձգտում են վերածուել մէկի. ինչպէս՝ գ'օնօց՝ գնաց, քօսօն՝ քսան, զօնգօն՝ կնկան, խագի՝ ոսկի, խուգիւյ՝ ոսկոր, սեռ, խագլյի. յօրթօմ՝ կ'երթամ, իւսիւր՝ սրա, իւսիւս քիւրիւստիւս՝ Յիսուս Քրիստոս։ Այս բոլորի մէջ ը, ռ, ե, ա, ի ձայնաւորները իրենց երանգը թողած՝ վերածուած են յաջորդ վանկի ձայնաւորին։

Քերականութեան մէջ կան մի քանի նորմուծութիւններ. իսկ ձայնական օրէնքները յառաջ են բերած զանազան տարօրինակ ձեւեր. ինչպէս՝ Մարաշում որոշեալ ը եւ անորոշ մը յօդերը առացել են՝ բառի վերջավանկի ձայնաւորի համաձայն՝ ը, ի, ու, իւ եւ մը, մի, մու, միւ ձեւերը. այսպէս՝ չարագը՝ չապիկը, փէղի՝ փայտը, ախշինի՝ աղջիկը, դանօզու՝ դանակը, մուզու՝ մուկը, խիւղիւ՝ խոտը, չարակ մը՝ չապիկ մը, փէդ մի՝ փայտ մը, ախշին մի, դանօզ մու, մուզ մու, խիւղ միւ, էօր միւ։

Յոգնակիի մասնիկներն են բացի իր, եիր (իյ, եիյ), ձեւերից նաեւ եա, եը, դաf, ինչպէս՝ ցիյիննիր, սմսմոնը, սէօխգիյնա, ձագըգնա, եւն։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի)